

1892ին¹⁰ Հրանտ Ասատուրի հետ հրատարակած է *Մա-
սիսը* իբրև գրական հանդես, զոր 1893ին շարունակած է
առանձին:

Նոյն միջոցին *Հայրենիքի* մէջ հրատարակած է *Նար-
դիկ*¹¹ կիսաւարտ վէպը եւ սկսած է *Ծանօթ դէմքերու*¹² շար-
քը՝ գրական նոր սեռ մը փորձելով:

Իր հրապարակագրական գործունէութեան վերջին
փորձն է *Մասիս* օրաթերթին հրատարակութիւնը, 1898ին,
աշխատակցութեամբ Սիպիլի եւ Հրանտ Ասատուրի:

Զօհրապ իր չափահասութեան տարիքին մէջ փորձած է
բանաստեղծութիւն ալ գրել, – հրատարակելով քսանի չափ
քերթուածներ¹³:

Իր գրական կեանքին վերջին արտայայտութիւնները
երեւցան *Ազատամարտի* մէջ՝ *Էջեր ուղեորի մը օրագրէն*¹⁴
խորագրին տակ:

Զօհրապի նորավէպերը լոյս տեսան երկու տարի առաջ
երեք հատորներով. – *Խղճմտանքի ձայներ*¹⁵, *Կեանքը ինչ-
պէս որ է*¹⁶ եւ *Լուռ ցաւեր*¹⁷: Պատրաստութեան մէջ են *Յի-
րուցան* եւ *Գոյնզգոյն*¹⁸:

«Աչքս ետին նետելով, ըսաւ Զօհրապ, կը տեսնեմ որ բո-
լոր կեանքս կռուելով անցուցեր եմ. օգտակա՛ր թէ վնասա-
կար կոխ՝ ինէ վերջը եկողները պիտի ըսեն: Միտք ունիմ,
փակելու համար գրական գործունէութեանս շրջանը,
պզտիկ թատերախաղ մը գրել՝ որուն նիւթը արդէն մտքիս
մէջ պատրաստ է»: